

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՆՈՐԻՉ ՄԱՅՐ ՏԱՅԱՐ

ՄՈԽԹՐԵԱԼ

ՏԱՐԵԿԱՆ ԾԽԱԿԱՆ ԺՈՂՈՎ

1 9 7 1

•••••••••

•••••

•••

1

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն  
ռ ռ ռ ռ ռ ռ ռ ռ ռ ռ ռ ռ ռ

1. - Հրաւէր եւ օրակարգ Տարեկան Ծխական Ժողովի :
2. - Զեկոյց Հոգեւոր Հովիւի :
3. - Բարոյական Տեղեկ Ծխական Խորհուրդի :
4. - Ընդհ. Տեղեկատուութիւն Տիկ. Օժանդակ Թանձնախումբի :
5. - Զեկոյց Եկեղեցաշինութեան Թանձնախումբի :
6. - Տեղեկատուութիւն Մամիկոնեան Մշակութայինի :
7. - Ընդհ. Տեղեկատուութիւն Հայ Դպրոցի Խնամակալութեան :
8. - Բարոյական Տեղեկ. Եկեղեցապէր Տիկ. Միութեան :
9. - Բարոյական Տեղեկ. Բուրաստանի Կազմակերպութեան :
10. - Տեղեկատուութիւն Կոմիտաս Դպրաց Դասի :
11. - Տարեկան Տեղեկ. Հեծեկ, Մոնթրէալի Մասնաճիւղի :
12. - Նիւթական Հաշուէտուութիւն Ծխական Խորհուրդի :
13. - Նիւթական տեղեկագիր Եկեղեցաշինութեան Մարմնի :
14. - Հաշուէտուութիւնք զանազան Մարմիններու :
15. - Նախահաշիւ Ծխական Խորհուրդի 1971 Տարեշրջանի Գործունէութեանց : - Պիւտճէ - :

oo  
oo  
:::oo

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՀՈՐԻՉ ՀԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ՏԱԶԱՐ, ՄՈՆՐԷԱԼ  
::: ::::::::::::::::::::: ::::::::::::::::::::: :::::::::::::::::::::

ՀՐԱՒՔԻ  
ՏԱՐԵԿԱՆ ԾԽԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ  
::: ::::::::::::::::::::: ::::::::::::::::::::: :::::::::::::::::::::

Մոնթրէալի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարի Հովիւնու  
Ծխական Խորհուրդը այսու կուգան Զեզ պաշտօնապէս հրաւիրելու  
Տարեկան Ծխական ժողովի, որ տեղի պիտի ունենալ յառաջիկայ  
Կիրաքի, 28 Փետրուար, 1971, կֆսօրէ վերջ ժամը 8.00ին, Եկե-  
ղեցւոյ Տիգրան Գարիպեան սրահին մէջ:

Օրակարգ ժողովի:

- |  |   |
|--|---|
| 1. - Աղօթք եւ Բացում:                                  | 6. - Ընտրութիւն Հաշ Մարմնի:                             |
| 2. - Ընտրութիւն Օրուան Դիւանի:                         | 7. - Ընտրութիւն ընտրողական<br>Յանձնախումբի:             |
| 3. - Անդրադարձում Նիւթա-բարոյա-<br>կան Տեղեկատութեանց: | 8. - Առաջնորդութիւն, Թե լադրու-<br>թիւններ եւ Զանազանք: |
| 4. - Նախահաշիւի վաւերացում:                            | 9. - Փակման խօսք եւ Աղօթք:                              |
| 5. - Ընտրութիւն 5 Ծխականներու:                         |   |
- 

Ընտրողական Յանձնախումբի պատրաստած Թեկնածուներու ցանկեր:

ԾԽԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԻ:

Արոշեան Կարպիս  
Արզումանեան Տօքթ.Ա.  
Գործեան Լեւոն  
Եազ ընեան Նազար  
Թաթիկեան Մարտիկ  
Կիկիեան Ցակոբ  
Ճանգուէ Գէորգ  
Պէրպէրեան օննիկ  
Քէթլի Վահէ  
Քէօփրիւլեան Լեւոն

ՀԱՇՈՒՔՆՍԻՉ ՄԱՐՄԻՆ:

Ալթունեան Վահէ  
Գազանձեան Վահան  
Թորիկեան Հրաչ  
Միսաքեան Վերժին  
Նշաննեան Ժիրայր  
Օղիկեան Կայծակ

Մանօթ. - Բոլոր ընտրութեանց արդիւնքը պիտի յայտարարուի ժողովին  
փակումէն առաջ:

Հովիւն  
Եւ  
Ծխական Խորհուրդ.

Մոնթրէալ, 15 Փետր. 1971:

## Տարեկան գեկոյց Հոգեւոր Հովիւի:-

Յարգարժան Ծխականներ,

1970 տարուան ընթացքին մեր Սուրբ Եկեղեցւոյ մէջ անխափան ու պաշտօնի գիտակցութեամբ, աշխատեցայ կատարել կրօնական բոլոր պարտականութիւններս, անթերի կերպով ու որոշեալ ժամերուն:

Կատարեցի, յաճախ մեր ժրաշան Սրբազան Հօր նախագահութեամբ, Մկրտչութեան, Նշանօր Հնութեան, Պսակադրութեան եւ Թաղման բոլոր Խորհուրդներն ու Արարողութիւնները, որոնք կուտան հետեւեալ թիւը. - մօտ Ութուուն եւ հինգ, որը բաղդատած անցեալ տարուան թիւին շատ աւելի բարձրէ, որովհետեւ այժմ ունինք շատ աւելի լաւ ու նպաստաւոր պայմաններ ու յատկապէս մեր Սեպհական Եկեղեցին:

Թաճախ քարոզեցի Եկեղեցւոյ մէջ, ու զանազան Զեռնարկներու ժամանակ հրապարակաւ խօսք առի այլազան նիւթերու շուրջ:

Մեր բարեջան Սրբազան Հօր բացակայութեանց, ջանացի նախագահել Ծխական Խորհուրդի գրեթէ բոլոր նիստերուն, ինչպէս նաեւ մեր միւս կազմակերպութեանց ժողովներուն:

Ժամանակ մը համեստ բաժինս բերի մեր Բուրաստան թերթին:

Գրասենեակային ժամերս յայտնի էին եւ գրասենեակէն ներս, Տէր Վաչէ Սրբազանի շինիչ թելազրութիւններէն յաճախ առաջնորդուած, ջանացի լաւագոյնս կատարել ամենօրեայ քարտողաբութեան աշխատանքները, նկատելով որ չունէինք մնայուն քարտուղար մը, որուն այնքան անհրաժեշտութիւնը կը զգացուի այժմ:

Այցելութիւններ տուի հիւանդներու, ու զանազան առիթներով, այցելեցի նաեւ բնակարանները այն Ծխականներու, որոնք փափաք յայտնած էին ընդունիլ գիս:

Բարոյական եւ նիւթական կարելի աշակցութիւնս չի խնայեցի այն Ազգայիններուն ու յատկապէս այն նորեկ մեր զաւակներուն, որոնք գանատա մնալու, ուսում շարունակելու, հանգստեան թոշակ ստանալու եւ կամ գնրծ գտնելու համար զանազան դժուարութեանց կը հանդիպէին: Եւ ասոնց թիւը վերջերս բաւական շատ բարձրացաւ, պէտք է ըսել. եւ սակայն հակառակ ասոր, կրցայ Աստուծոյ Օգնութեամբ, հասնիլ բոլորին եւ միշտ ալ բարի կարգադրութիւններ ըսել:

Եւ վերջապէս, բարոյական համեստ բաժինս բերի այն ընդհանուր աշխատանքներուն, որոնցմէ կախեալ էր մեր Սեպհական Եկեղեցի Թպրոց ունենալու հարաւորութիւնը, որը այսօր իրականութիւն է դարձած կամօքն Աստուծոյ ու նորա անսահման ողորմութեամբը, եւ Զեր նիւթաբարոյական անգին զոհողութեամբը:

Բարձրեալ Աստուծած հարցն մերոց, թող միշտ առողջ պահէ զաեզ, տայարեւշատութիւն բոլորիդ եւ Զեր բոլոր բարի գործերը յաջողութեամբ պսակէ:

Աղօթաբար,  
Կիւրեղ Քհնյ. Եթէնէկեան  
Հովիւ,

Բարոյական Տեղեկատուութիւն Մոնթրէալի  
Հայց. Առաք. Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ Ծխական Խորհուրդի  
\*\*\*\*\*

1970-1971

\*\*\*\*\*

Սիրելի Ծխականներ,

Մոնթրէալի Հայց. Առաք. Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ տարեկան  
Ընդհանուր Ծխական ժողովը տեղի ունեցաւ Կիրակի, Մարտ 1, 1970ին,  
Գաղութիս 5242 Փարք գտնուող Եկեղեցւոյ Կեղութին Մէջ, Նախագահու-  
թեամբ Բարեխնամ Առաջնորդական Փոխանորդ, Տէր Վաչէ Եպս. Յովսէփեանի  
եւ ի Ներկայութեան Գաղութիս Հովիւ, Տէր Կիւրեղ Քհնյ Եթէնէկեանի:

Ցիշեալ ժողովին ընթացքին գաղտնի քուէարկութեամբ տեղի ունեցաւ  
մասնակի ընտրութիւն փոխարինելու Համար անցեալ Ծխական Խորհուրդի  
կազմէն շըջանը աւարտած չորս Ազգայինները: Արաւելագոյն քուէներու  
կարգով ընտրութեան հետեւալ ազգայինները. Պրն. Յակոբ Զավգավաթճեան  
Սուրէն Թաշճեան, Սահակ Թոփալեան եւ Նուպար Պապիկեան:

Խորհուրդիս անդրանիկ նիստին կատարուեցաւ Դիւանի ընտրութիւնը հե-  
տեւալ կազմով: —

Ատենապետ, Պրն. Վահէ Քէթլի Փ. Ատենապետ, Պրն. Ս. Թոփալեան,  
Ատենապիր, Նուպար Պապիկեան, Գանձապահ, Միսաք Կուտսուզեան,  
Փ. Ատենապիր, Հ. Միսաքեան, Փ. Գանձապահ, Գէորգ Ճանգուլ,  
Խորհրդականներ, Յակոբ Թագւորեան, Յ. Զավգավաթճեան եւ Սուրէն Թաշ-  
ճեան:

Տարւոյս ընթացքին, իրենց անձնական պատճառներու քերումով, Խորհուր-  
դէս հրաժարեցան Պրնք. Հ. Միսաքեան, Յակոբ Զավգավաթճեան եւ Սահակ Թո-  
փալեան: Զիրենք փոխարինելու Համար, առաւելագոյն քուէի շարքով Խոր-  
հուրդիս մաս կազմեցին Պրնք. Վահէ Թաշճեան, Վահան Ֆաբարեան եւ Տիրան  
օհաննէսեան:

Ծխական Խորհուրդ: այս տարեշըջանի ընթացքին գումարեց 88 նիստեր  
ու արդար հպարտութեամբ եւ հոգեկան գոհունակութեամբ կը յիշատակ է,  
թէ իր գործունէութեան շըջանին տեղի ունեցաւ փոխարինմը մեր սեփա-  
կան կալուածէն ներս, եւ օծման չափիսութիւնը մեր Եկեղեցւոյ:  
Հակառակ մեծապէս ծանրաբեռնուած ըլլալով այս աշխատանքներով, Խոր-  
հուրդս կարողացաւ մօտէն զբաղելու ներքին կազմակերպչական այլ հար-  
ցերով:

Հ. Բ. Ը. Միսաքեան հետ համաձայնագրի ստորագրութիւն: —  
Փետրուար 18, 1970ին կայացած Ծխական արտակարգ ընդհանուր ժողովին  
որոշման համաձայն, Ծխական Խորհուրդս 18 Մայիս, 1970ին ստորագրեց  
երկողմանի համաձայնագրի մը տեղւոյս Հ. Բ. Ը. Միսաքեան Վարչութեան հետ  
որուն հիման վրայ Հայց. Առաք. Եկեղեցւոյ սեպհականութիւնը եղող Հանրի  
Պուրասսայի հողը փոխանցեց տեղւոյս Մասնաճիւղին, փոխան 85 հազար տո-  
լարի, առանց տոկոսի, փոխատուութեանմը, մինչեւ Հ. Բ. Ը. Կողմէ կե-  
րոյիշեալ հողին վերջնական գնումը:

Եկեղեցւոյ գնման վաւերաթութերու ստորագրութիւն: —

Անցեալ տարուան Թունիս 22ին, այժմու մեր սեփական Եկեղեցւոյ Վաչէ  
Եպս. Յովսէփեան սրահին Մէջ ի Ներկայութեան Գաղութիս Առաջ. Փոխանորդ  
Գերշ. Վաչէ Եպս. Յովսէփեանի եւ Գաղութիս Հովիւ Արժ. Կիւրեղ Քհնյ Եթէ-  
նէկեանի, Ծխական Խորհուրդի եւ Եհնութեան Թանձնախումբի անդամներուն  
ինչպէս նաև Գաղութիս զանազան կազմակերպութեանց ներկայացուցչական  
դէմքնը ու տեղի ունեցաւ Մայր Տաճարի գնման պաշտօնական վաւերաթութե-  
թերու ստորագրութիւնը իւնայթը Զըրչի պատասխանատու Մարմիններու  
ներկայացուցիչներուն հետ: Ներկայ էին նաև մեր եւ անոնց փաստաբան-  
ները, որոնք գնահատելի աշխատանք էին տարած այդ ուղղութեամբ:

Մայր Տաճարի օծման չանդիսութիւնն :—

Անցեալ տարուայ Դեկտ. 5 եւ 6 օրերը Մոնթրէալահայութեան համար հանդիսացան պատմական օրերը արդարեւ այդ օրերուն էր որ տեղի ունեցաւ Մայր Տաճարի օծումը Զեռամբ Պոլսոյ Պատրիարք Բարձր Տէր Շնորհը Արք Գալուստեանի եւ ներկայութեամբ ու մասնակցութեամբ Ամերիկայի Թէմիս Առաջ Տէր Թորգում Արք Մանուկեանի, Փոխանորդ Սրբազան Հօր, Կընքայրութեամբ Պոստոնար նակ բարերար Տիար Գրիգոր Մազմանեանի :

Օծման Շաբթուան ընթացքին կայացած չանդիսութիւնները, որոնք կազմակերպուեցան յաջորդաբար չամայնքիս զանազան Տիկնանց Ցանձնախումբերու, Երիտասարդական Կազմակերպութիւններու եւ օծման Ցանձնախումբին կողմէ պսակուեցան ամբողջական յաջողութեամբ, անմոռանալի յիշատակներ թողելով Մոնթրէալահայ Հաւատացեալ ներու սրտին մէջ :

Այս առիթով, յայտնելու համար Մոնթրէալահայ Գաղութի անդամներու երախտագիտական եւ չնորհակալական զգացումները Գանատայի Փոխանորդ Տէր Վաչէ Սրբազանին, իր տարած նուիրական եւ անգերազանցելի աշխատանքին, Ծխական Խորհուրդս Մայր Տաճարի Մուտքին գետեղեց յիշատակառան մը, ինչպէս նաև Մշակութային սրահը անուանեց իր անունով :

Հայ Տան պարագան :—

Առ ի գործադրութիւն Փետր. 13, 1970ի ընդհանուր ժողովին որոշման, Խորհուրդս Աքրօբոլ Ընկերութեան յանձնեց Հայ Տունի վաճարման հարցը : Նկատելով որ վերոյիշեալ Ընկերութիւնը կարող չեղաւ այդ ընել, ծանելու գործը յանձնուեցաւ ապա Ռոյեալ Թրաստ Ընկերութեան :

Չեռնարկները :—

Քաջալերուած անցեալ տարուան նիւթական եւ բարոյական բացառիկ յաջողութենէն, Խորհուրդս աջակցութեամբ Գաղութիս շարք մը նուիրեալ ազգայիններուն եւ Տիկնանց օժանդակ Ցանձնախումբի անդամներուն, Երկրորդ տարին ըլլալով, կազմակերպեց Տարեկան Պարահանդէսը, որ պսակւեցաւ աննախնդաց յաջողութեամբ :

Այս բացառիկ ձեռնարկին կողքին, աջակցութեամբ Տիկնանց Եկեղեցական Ցանձնախումբի նուիրեալ անդամուհիներուն, կազմակերպութեցան զբոսապտոյտներ, ճաշկերոյթներ, շարժանկարի ներկայացումներ, դասախոսութիւն եւ այլ հասութաբեր ձեռնարկներ :

Փոխ յարաբերութիւններ եւ հանդիպումներ :—

Ծխական Խորհուրդս, Նախանձախնդիր ներքին կազմակերպչական աշխատանքներու, քանից հանդիպումներ ունեցաւ Խորհուրդիս հովանաւորութիւնը վայելով բոլոր Միութիւններու վարչական կազմերուն հետ, աւելի եւս սերտացնելու համար կապերը Ցանձնախումբերու անդամներուն միջեւ :

Արտաքին ճակատի վրայ, Խորհուրդիս յարաբերութիւնները Գաղութիս մէջ գործող այլ կազմակերպութիւններու հետ եղան միշտ բարւօք, հիմնը ւած իրար Հասկացողութեան դրական հիմերու վրայ: Խորհուրդս իր շաբաթական նիստերուն ընթացքին, հանդիպումներ ունեցաւ նաեւ Համայնքին Խորհուրեալ կարգ մը ազգայիններու հետ, ուսումնասիրելու համար եւ ձեւաւորելու մտօք Եկեղեցւոյ ի նպաստ նիւթական ապահովութիւնը: Սոյն հանդիպումներն ալ եղան գործնական եւ արդիւնատու:

Բուրաստան ամսաթերթ :—

Եկեղեցւոյս պարբերաթերթը, շնորհիւ իր կազմին եւ անոր տարած աշխատանքին, կարելի եղաւ անցեալ շրջանին կանոնաւոր ժամանակներուն լոյս ընծայել ու զայն ատենին ընթերցողին հասցնել: Բուրաստանը եղաւ աւելի ճոխ ու բովանդակալից իր գրութիւններով, եւ դարձաւ փնտրուած թերթը Գաղութիս մէջ :

Ամենօրեայ Մանկապարտէզի համաձայնութիւնն :—

Ընդհառաջելով տեղւոյս Հ.Բ.Ը. Միութեան վարչութեան խնդրանքին, Խորհանարար Տիկնանց էջ-

Հոգը Մայր Եկեղեցւոյ կից գտնուող սենեակներուն երկուքը տրամադրեց Հ.Բ.Ը Մի Ուսումնական Խորհուրդին, իբրև ամենօրեայ մանկապարտէզ գոծածնլի, որուն փոխարէն չամայնքս պիտի ստանայ 8.000 տոլարի գումար մը:

Այցելութիւններ եւ նուիրատուններ:—  
Գաղութս այցելող ու իրենց նիւթական օժանդակութիւնը բերող բարերարներու թիւը մեծ ըլլալուն, հոս կարժէ որ յատկապէս յիշենք Տիար Ալեք Մանուկեանը որ եղաւ գլխաւոր նուիրատուն մեր Եկեղեցւոյ եւ Տիար Գրիգոր Մազմանեանը, որ իր կարգին եղաւ Անոր Կնքահայրը օծման հոգեպարար չանդիսութեանց ընթացքին:

Արժ. Տէր Սահակ Քջնյ. Պալեանի պարագան:—  
Տէր Սահակ Քահանայի վերջնական Մոնթրէալ բնակութիւն հաստատելէն օգտուելով, Մրբազան Հայրը յարմար գտաւ ու հրաւիրեց Տէր Հայրը որ մեր Եկեղեցւոյ օգտակար հանդիսանայ ու յարմար առիթներով պատարագէ եւ քարոզէ մեր հաւատացեալներուն:

Թելադրութիւններ:—  
Մխական Խորհուրդս պարտք կր զգայ նորը նոր անդամներուն ներկայացնել հետեւեալ թելադրութիւնները:—  
1. Մնայուն քարտուղարի մը անհրաժեշտութիւնը Կալուածէն ներս:—  
2. Պատրաստութիւն թեմին Պատգամաւորական ժողովի:—  
3. Սատակարար Մարմնի մը անհրաժեշտութիւնը:

Պարտք կը զգանք նաեւ մեր Երախտագիտական անկեղծ զգացումները յայտնելու գանատայի Առաջ. Փոխ. Տէր Վաչէ նպս Ցովս էփեանի, Գաղութիս Հոգեւոր Հովիւ Արժ. Տէր Կիւրեղ Քջնյ. Եթէնէկեանի, մեր հովանագորութիւնը վայելող բոլոր Մարմիններուն ինչպէս նաեւ մեր բոլոր Ազգայիններուն որոնց անշահախնդիր աշակցութեան շնորհիւ կարելի եղաւ բոլորել արդիւնաւոր ու բեղուն տարի մը եւս:

Ի դիմաց Մխական Խորհուրդի  
Այտենապիր, Այտենապետ,  
Ն. Պապիկեան Վահէ Քէթլի

\*\*\*\*\*  
\*\*\*\*\*

Ընդհանուր Տեղեկատուութիւն Տիկնանց օժանդակ Թանձնախումբի,  
\*\*\*\*\*

Յարգելի Մխականներ,

Եկեղեցաշինութեան Տիկնանց օժանդակ Թանձնախումբը Զեզ կը ներկայացը 1970 շրջանի գործունչութիւնը եւ անոր արդիւնքները:  
Առաջին ձեռնարկը Հայկական Բարթին էր որ տեղի ունեցաւ Մարտ 8, 1970ին, նանզ Այլընտ գեղեցիկ սրահներէն մէկուն մէջ: Թանձնախումբի անդամունքները իրենց անձնական ծախսերով յանձն առած էին ուտեստեղինի մասը, շատ ճոխ, որ ճաշակաւոր ձեւին տակ ներկայացուեցաւ ու արժանացաւ ներկաներուն գնահատանքին:

Այս ձեռնարկը մեզի ապահովեց 587.48 տոլարի կոկիկ գումար մը:  
Զատկուան առթիւ, Թանձնախումբին Տիկինները դարձեալ իրենց բարոյական եւ նիւթական աշակցութիւնը բոլով, գործի լծուեցան օգնութեամբ մեր քոյր Միութիւններու Տիկիններուն, պատրաստելով ու նեղաւորելով  
— Շար. յաշորդ էջ-

Զատկուան հաւկիթներու կողովները :

Սոյն ձեռնարկէն գոյացաւ 2291. 88 տոլարի զուտ հասոյթ մը :  
Մարտ 29, 1970, Զատկուան ծաշկերոյթի առթիւ, 2000 տոլարի Զէք մը  
յանձնեցինք Պատուարժան Եկեղեցաշխինութեան Յանձնախումբի անդամներուն :  
Նոյ. 27, 1970ին, Եկեղեցւոյ տարեկան Պարահանդէսին մեր Տիկ նանց Յանձնախումբը աշխատանքի իր կարեւոր բաժինը ունեցաւ սոյն ձեռնարկին յա-  
շողութեանը գործին մէջ :

1965ի Մարտ 10ին կազմուած է Եկեղեցաշխինութեան Տիկ նանց օժանդակ  
Յանձնախումբը ու այսօր 6 տարի ներ ետք, Հպարտութեամբ ու նրուի մեծ  
գոհունակութեամբ կր ներկայանայ իր նորակիր անունին տակ Եկեղեցւոյ  
ֆոնտի Տիկ նանց օժանդակ Յանձնախումբ - եւ կը ներկայացնէ իր տարեկան  
տեղեկատուութիւնը Զեր բոլորիդ :

Այս անունի փոփոխութիւնը պատշաճ համարուեցաք մեր Մայր Տաճարի  
սեփականացումէն վերջ :

Վարչական կազմ : --

Ատենապետուհի, Արտա Գույումճեան  
Ատենադպրուհի, Ալիս Մելքոնեան  
Հաղորդակցութիւն, Նատիա Շիրինեան  
Յարաբեր, Էլիզ Տէրվիշեան  
Վարդուհի Եղիայեան եւ Հայկուհի Շամլեան :

Անդամուհիներ : --

Արշալոյս Պալթանեան, Այտա Գարիպեան, Այտա Թամիկեան, Մատլէն Գուն-  
թէրեան, Մայտա Ալթունեան, Սիլվա Գունթէր, Սոնա Տէմիրճեան, Սըրու-  
հի Տէր օհաննէսեան, Սիրարփի Խանճեան եւ Սեզա Աճէմեան :

Այս առիթով, Հրապարակաւ կր խոստանանք շարունակել մեզի վստահած  
սոյն նուիրական գործը եւ օգտակար հանդիսանալ մեր Սուրբ Եկեղեցւոյ  
այս սիրելի Համայնքին ու բնդհանուք առմամբ մեր ստեղծագործ Հայ  
ժողովուրդին պատուական :

Մնամք ազնիւ զգացումներով եւ լաւագոյն մաղթանօք բոլորիդ :

Ի դիմաց Տիկ նանց օժանդակի  
Ալիս Մելքոնեան.

Փետր. 9, 1971 :

\*\*\*\*\*

Տեղեկատուութիւն  
Եկեղեցիութիւն Շինուիթեան ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԻ

Յարգելի Ծխականներ,

1965 էն ասդին կազմուած Յանձնախումբիս աշխատանքները դարձան Հա-  
մայնքը յուզող թիւ մէկ հարց եւ ամէն տարի զիրար յաջորդող Ծխական  
Խորհուրդները օրակարգի ամենակարեւոր նիւթը ըրին զայն :

Մինչ մեր տարի ներու աշխատութիւնները կը շարունակուէին Եկեղեց-  
ւոյ շինութեան հարցով, միևնու կողմէ Նկատի ունենալով ներկայ դժուա-  
րութիւնները սեփական Եկեղեցին մը կառուցման, որ պիտի կարօտէր եր-  
կար ժամանակի եւ նիւթական բազմածախս գումարներու, որոշուեցաւ նա-

-7ար, յաջորդ էջ-

Եւ նկատի ունենալ պատրաստ շէնքի մը գնման գաղափարը։ Գլխաւորութեամբ Գանատայի նռաջն Փոխանորդին, Գերշ. Տ. Վաչէ նպս Յովս էփեանի, Ծիսկան Խորհրդոյ եւ Շինութեան Յանձնախումբի անդամներու ջանքերուն շնորհիւ, Երկարատեւ եւ գաղտնի բնակ ցութիւններէ ետք Փետր. 18, 1970 կայացած Ընդհանրամական ժողովին Միաձայն Հաւանութեամբ որոշուեցաւ գնել սոյն պատկառելի կառուցուածքը, որուն կամարներուն ներքեւ այսօր առաջին անգամ ըլլալով կը գումարենք մեր տարեկան Ընդհանրամական ժողովը։

Գեղեցիկ բառերով հիւսուած նախադասութիւններ անզոր կը մնան այն ինչ որ մենք պիտի ջանանք թուղթին յանձնել կարենալ բացատրելու համար մեր տարի ներու տարած աշխատութեանց արգասիթը։

Այսօր այս փառաւոր Կալուածին գնումով Սոնթրէալահայութիւնը տեսաւ գրեթէ մէկ օրէն միւսը իր տարի ներու երազին իրականացումը։ Մեզի, որպէս Շինութեան Յանձնախումբ, կը մնայ Երախտագիտութեամբ խոնարհիլ Գերշ. Վաչէ Սրբազնին առջեւ եւ աղօթել Բարձրեալն Աստուծոյ որ երկար ու առողջ կեանք պարզեւէ իրեն, կարենալ շարունակելու իր առաջնորդի պաշտօնը, մանաւանդ Գանատայի մէջ։

Շնորհակալութիւն լայն բաժին մը անցնող ու ներկայ Ծիսկան Խորհրդներուն, ինչպէս նաեւ Շինութեան Յանձնախումբիս կողքին աշխատող այն իւրաքանչիւր անդամին, որոնք տարի ներու զոհաբերութեամբ ստար հանդիսացան մեր այս յաջողութեան։

Շնորհակալութիւն նաեւ բոլոր այն նուիրատուներուն, անոնք ըլլան Գանատային կամ այլուր, որոնց սրտաբուխ նուէրներով իրականութիւն դարձաւ սեփական Եկեղեցի մը ունենալու հարցը։

Բոլորս միատեղ աղօթենք մեր Սուրբ Եկեղեցւոյ մէջ, Փառք տալով Ամենակալին, որ արժեցուց տարի ներու թափած մեր աշխատութիւնները։

Ի դիմաց Եկեղեցւոյ Շին. Յանձնախումբի

Արա Կէրիքեան  
Ատենապիր,

Ժիրայր Գունթէրեան  
Ատենապետ,

\*\*\*\*\*

\*\*\*\*\*

\*\*\*\*\*

\*\*\*\*\*

ՄԱՍԻԿՈՒՆԵԱՆ Մշակութային Թանձնախումբ,  
-Տարեկան տեղեկատուութիւն-

### Յարգելի Ծխականներ,

Մամիկոնեան Մշակութային Թանձնախումբը քոլորեց տարի մը եւս, տարի մը շինիչ ու համերաշխ աշխատանքի եւ մշակութային պէս պէս գործունէութեանց, հաւատարիմ մնալով Միշտ իր գոյութեան նպատակին, որն է վառ պահել մշակութիւն հանդէպ սէրը մեր ազգակիցներուն սրտին մէջ, եւ մանաւանդ հաղորդել զայն մեր երիտասարդներուն: Խոնարհ եւ անշահանդիր աշխատանք տանիլ, ի մտի ունենալով Հայ հաւաքականութեան շահումիայն:

Թանձնախումբս կը բաղկանար հետեւեալ անդամներէն:

Պրն. Ա. Ուզունեան	Ատենապետ	Պրն. Կ. Շամլեան	Փատենապետ
Տիկ. Ա. Արթինեան	Ատենադպիր	Պրն. Տ. Պալեան	Խորհրդական
Օրդ. Ա. Շամլեան	Զգանձապահ	Պրն. Վ. Քէթլի	Խորհրդական
Տիկ. Մ. Գունթէր	Խորհրդական	Պրն. Ժ. Խշանեան	Խորհրդական
Պրն. Ն. Իփէքնեան	Խորհրդական	Պրն. Թ. Թունճեան	Խորհրդական

Ստորեւ կը ներկայացնենք ամիսի մէկ տեղեկատուութիւնը Թանձնախումբիս ունեցած գործունէութիւններուն, 1970 տարուայ ընթացքին:

-Այս տարի եւս զարդանանց պատերազմի ոգեկոչումը շատ ինքնատիպ կերպով տօնուեցաւ 15 փետրվարի 1970, Կիրակի երեկոյ Հայ Տան մէջ: Թայտագրին գլխաւոր մասը կը բաղկանար վիճաբանական ասուլիսէ մը, զարդանանց պատերազմի պատմական իրադրութեան եւ հեռահաս հետեւանդներուն շուրջ: Ասուլիսին մասնակցեցան Պրնք. Խ. Տէտէեան, Ժ. Այվատեան, Մ. Կուտսուզեան եւ Կ. Շամլեան: Վիճաբանութիւնը վարեց, Թանձնախումբիս ատենապետ Պրն. Ն. Ուզունեան:

-25 ապրիլ 1970, Ապրիլեան նահատակաց Ցուշահանդէս տեղի ունեցաւ Մայր Տաճարի մէծ սրացին մէջ, թանձնախումբիս եւ միջգաղութային Միութիւններուն կազմակերպութեամբ: Տպաւորիչ կերպով արտասանուեցաւ Զ. Մ. Քոնեանի երգ Բարեկամութեան եւ չամակերպումի - բանաստեղծութիւնը: Օրուան բանախօնն էր Տօքթ. Ն. Պէրպէրեան, իսկ երիտասարդներուն կողմէ խօսք առաւ Պրն. Ա. Կերիքեան: Պրն. Ն. Ուզունեան ներկայացուց զուգահեռ մը, լուսապատկերներով, 1915-1970, անգամ մը եւս շեշտելու համար թէ որքան մէծ է վերապրելու մեր յոյսը, երբ աչքի առջեւ կունենանք 1915ի ողբերգական տեսարաններէն վերջ, այսօրուան զգլիսից վերելքը մեր Ազգին ու Մայր Հայրենիքին: Թայտագրը վերջ գտաւ Տէր Կեցուի ձայնագրեալ երգեցողութեամբ եւ կատարուած Երեւանի Պետական երգչախումբին կողմէ:

-28 մայիս 1970, Նաբաթ երեկոյ, Մայր Տաճարին Մշակութային սրահին մէջ տեղի ունեցաւ դասախօսական լուրջ երեկոյթ մը: Օրուան բանախօնն էր ձարտարապետ Գ. Անտոնեան, որ վկայեալ Երեւանի Պետական Համալսարանէն այժմ իր տօքթորան կը պատրաստէ Գանատայի մէջ: Բանախօնին խիստ շահեկան նիւթն էր Արդի ճարտարապետութիւնը Մայր Հայրենիքի մէջ - զոր ներկայացուց լուսապատկերներու միջոցաւ:

-18 յունիս 1970ին Թանձնախումբս կազմակերպեց յիշատակի երեկոյ մը, նույիրուած տաղանդաւոր բանաստեղծ եւ նկարիչ Փիւզանդ Թոփալեանի որ մահացաւ Բարիգի մէջ, 19 Մայիս 1970ին: Երեկոյթը տեղի ունեցաւ Տաճարին Մշակութային Սրահին մէջ: Օրուան գլխաւոր բանախօնն էր Պրն. Վ. Պոյաճեան որ բացառիկ պատեհութիւնը ունեցած է մօտէն գործակցելու ողբացեալ մըտարուրականին հետ:

-Նար. յաշորդ էջ-

-1970 տարին ըլլալով նորիմեան Հայրիկի ծննդեան 15օամեակը, Մամի-կոնեան Մշակութային Թանձնախումբը եւ Հայց Եկեղեցւոյ Եղիտասարդաց Կազմակերպութիւնը սիրով միացան տօնելու համար յիշտակը Հայոց Հայրիկին: Յայտագրին մաս կազմեցին նաեւ կենդանի պատկեր մը եւ Հայրիկին կեանքէն քաղուած անէքտօթներ:

-25 սեպտ. 1970, Ծխական նորհրդոյ ատենապատ Պրն.Վ.Քէթլի, այցելած ըլլալով Պոլիս եւ այդ առթիւ Պոլսոյ ազգային հաստատութիւնները, սիրայօժար՝ կերպով իր տպաւորութիւնները բերաւ Համայնքին, մտերմիկ երեկոյթի մը ընթացքին, գոր Յանձնախումս կազմակերպած էր Եկեղեցւոյ Մըշակութային Սրահին մէջ:

Յանձնախումս այս տարի եւս ձեռնարկեց Հայերէն լեզուով շնորհաւորական քարտերու պատրաստութեան, որոնք մեծ ընդունելութիւն գտան եւ գնահատանքի արժանացան բոլորին կողմէ:

Մեր մշակութային գործունէութեանց շարքին կապ հաստատեցինք նաեւ ֆրանսայի էրեքունի հրատարակչականի հետ, որոնց հրատարակած մանկական գեղատիպ հատորները, ինչպէս Յովհան Թումաննեանի թմկաբերդի Առումը, Քաջ Նազար, Գիգորը, Եւայլն առաջին անգամ ըլլալով տարածեցինք մեր ժողովուրդին մէջ: Նոյնական նաեւ Միլանոյի մէջ հրատարակուած Վաւերագրեր Հայկական ձարտարապետութեան՝ մատէնաշարը մատչելի ըրինք մեր Համայնքին: Կը յուսանք թէ սահմանափակ պայմաններու տակ կատարուած վերոյակեալ գործունէութիւնները կրցան օգտակար դառնալ, յագեցնելու համար գոնէ մասամբ, մշակոյթի պապակը մեր սիրելի ազգակիցներուն մէջ:

Յարգանօք,  
Ն.Ուզունեան Ա.Արթինեան

Տեղեկատութիւն  
Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Հայաստանեայց Եկեղեցւոյ  
Շաբաթօրեայ Վարժարանի Խնամակալի  
1970-1971.

Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ վերամուտի արձանագրութիւններն ու դասարաններու կանոնական բաժանումները եղան՝ 12 Սեպտ. 1970 ին Մայր Տաճարի յարակից Վարժարանի բաժանմունքին մէջ:

Արձանագրուած են 160 աշակերտներ, որոնցմէ 155ը կը շարունակեն հետեւիլ դասընթացքներուն կանոնաւորաբար:

Նախակ ըթարանի Բաժին.՝ 115 աշակերտ,  
Մանկապարտէզի Բաժին.՝ 40 աշակերտ:

Ուսուցական կազմ՝

Խնամակալ Մարմինը Վարժարանի Տնօրէն նշանակեց Պրն.Ժ.Այվատեանը եւ Փոխ-Տնօրէնուցի, Տիկ.է.Աքքիպրիթեանը:

Տիկ.է.Աքքիպրիթեան, պատասխանատու Զ.Կարգի

, Վ.Պատասխան, պատասխանատու է.Կարգի

, Ն.Գրմգըմեան, պատասխանատու Դ.Կարգի

, Ա.Ազնաւուր, պատասխանատու Գ.Կարգի

, Մ.Պասմաճեան, պատասխանատու Բ.Կարգի

, Մ.Արագեան, պատասխանատու Ա.Եւ Շաղիկ Դասարանի

, Օրդ.Ա.Այվատեան, պատասխանատու Կոկոնի եւ Մանկապարտէզի:

Այցելու ուսուցչի հանգամանքով կը դասաւանդէ Պրն.Թագւոր Թուճեան:

Պատասխանատու է.Տիկ.Վ.Գարանտիլ: Որպէս օգնական ուսուցչուցի

կը պաշտօնավարեն, Վարժարանի շրջանաւարտուցիներէն օրդ.Հ.Աքքիպրիթեան

Նար.յաջորդ էջ-

Եւ օրդ. Լ. Քէօրողլեան:

Դասաւանդութիւն.

Ըստ նախորդ շըջաններէն մեզի փոխանձուած ուսումնական ծրագրին,  
Վարժարանն ներս կը դասաւանդուին, հետեւեալ նիւթերը. -

Կրօնագիտութիւն, չայոց Պատմութիւն, չայերէն եւ երգ, որոնք կը  
աւանդուին նուիրումով եւ աշակերտութեան մէջ չայլեզուին սէրը հը-  
րահն լու լուրջ աշխատանքով: Որպէս դասագիրք կը գործացուի Արագած  
Ա.Բ եւ Գ.Գիրքները, Մայրենի լեզու Զ.Կարգին եւ գրականութիւն:

Մանկապարտէզը կը հետեւի Այբբենարան դասագիրքին:  
Բոլոր դասագիրքները եւ գրենական պիտոյքները ձըիօրէն տրամադրուած  
են աշակերտութեան:

Հանդէսներ եւ Զեռնարկներ. -

Նոր Տարուան եւ Սուրբ Ծնունդի առիթով ուսուցական կազմը կազմա-  
կերպեց Կաղանդի ներքին Հանդէս մը: Զոյգ Կաղանդ-Պապաներով եւ պատ-  
շաճ յայտագրով աշակերտութիւնը ապրեցաւ բերկրալի պահեր: Նուէրներ  
տրուեցան բոլոր աշակերտներուն եւ ուսուցական կազմին:

Ծրագրուած է կազմակերպել. -

Ա. Սնողական Երկու ժողովներ,

Բ. Թէյապար մը ի նպաստ Վարժարանին,

Գ. Տօնել Մայրերու օրը,

Դ. Ամավերջի Հանդէս:

Վարժարանը փակուեցաւ Եկեղեցւոյ օծման առիթով 4 Դեկտ. 1970ին, նոր  
Տարուան առիթով 27 Յունուանին, 1971ին:

Դպրոցի փակումը պիտի ըլլայ Յունիսի երկրորդ շաբաթը:

Նիւթական կացութիւն. -

Վարժարանս յաճախող աշակերտներու ամսեթոշակը դասաւորուած է հե-  
տեւեալ ձեւով:

Սուտքի տուրք, ընտանիքի համար. - 5 տոլար.

Մէկ աշակերտի ամսեթոշակ. - 4 ,

Երկու աշակերտի ամսեթոշակ. - 7 , :

Իսկ երկուքէ աւելի զաւակ ունեցող ընտանիքներու եղած է մասնաւոր  
կարգադրութիւն:

Ունինք նաեւ ձրիավարժ աշակերտներ: Ցարդ աշակերտներէն գանձուած  
է 1199 տոլար:

Թիշեալ գումարին 825 տոլարը յանձնուած է Ծխական նորհուրդին:  
280 տոլարը յատկացուած է ուսուցիչներուն, 15ը շարժավարին, որպէս  
նուէր, իսկ 21 տոլարը այն աշակերտներուն վերադարձուած է, որոնք չեն  
կարողացած Դպրոց յաճախել Երթեւեկի դժուարութեանց պատճառաւ:

Իսկ այժմ գանձին մէջ ունինք 102 տոլարի պատրաստ գումար մը:

Այս առիթով, փակելէ առաջմեր տեղեկատուութիւնը, ինամակալ Մարմինս  
իր շերմ շնորհակալութիւնները կը յայտնէ Պատուարժան Ծխական նորհուր-  
դին, իրեն վստահուած այս յոյժ նուիրական Գործին համար:

Ատենապիր,  
Վ. Պալեան

Ատենապետ,  
Մ. Մենենտեան

5-:--:--:--:--:--:--:--:--:--:--:--:--:--:--:--:--:--:--:5

ԵԿԵՂԵՑԱՍՔՐ ՏԻԿԱՆՑ ՄԻՈՒԹԻՒՆ

::::::::::: ::::::::::::: ::::::::::::: :::::::::::::

1969-1970 Տարեշրջանի բարոյական տեղեկատուութիւն. -

Ցարդարժան Ծխականներ Ս.Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարի,

- 7ար. -

Եկեղեցասէր Տիկնանց Մարմնի 1970-71 Տարեշըջանի վերակազմութեան եւ ընտրութեան համար, Եկեղեցւոյս Հոգեւոր Հովիւ, Տէր Կիւրեղ Քահանան շըջաբերականով մը կոչ կուղու է Համայնքին ազգանուէր Տիկիններուն ընդհանուր ժողովի թուական որոշելով 17 Մարտ, 1970 օր, օրակարգի հարց նշանակելով Հետեւեալ ները.-

Ա.՝ Նախորդ շըջանի բարոյական ու նիւթական տեղեկատութիւն,

Բ.՝ Կարծիքներ եւ թելազութիւններ,

Գ.՝ Ներկայ շըջանի Դիւանի ընտրութիւն, անդամագրութիւն, տուրքի գանձում, նոր շըջանի ընտրութիւն,

Դ.՝ Պարտաւորութեանց բարեփոխում եւ սահմանաւորում:

Այնպէս որ վերոյիշեալ օրը, Եկեղեցասէր Տիկնանց Վարչութիւնն ու անդամները ժամը 9 ին կոչ Հաւաքուին Հայ Տունի մէջ, Նախագահութեամբ Արք Տէր Կիւրեղ Քէնյ. Եթէնկեանի :

Տէր Հօր աղօթքէն ու բարեգալստեան եւ յաջողութեան մաղթանքներէն վերջ, Դիւանի ընտրութեան կը դիմուի ու ապա կորոշուի անցնիլ ընտրութեանց:

Կը նտրուին Հետեւեալ Տիկինները.-

Ե. Գարիպեան, որպէս Ատենապետուհի,

Հ. Կուտսուզեան, որպէս փոխԱտենապետուհի,

Ա. Ազնաւուր, որպէս Ատենադպրուհի,

Շ. Բրուտեան, որպէս փոխԱտենադպրուհի,

Ս. Պելկին, որպէս Գանձապետուհի,

Ա. Գերիքեան, որպէս Հաշուապահ,

Ս. Մուրանական, որպէս Խորհրդական,

Ն. Գրմամեան,

Օրդ. Մ. Սարաֆեան,

Օրդ. Մ. Սարաֆեան,

Բաց աստի, Պրն Սուրեն Թաշճեան ներկայացւցիչ նշանակուած էր Ծընական Խորհուրդէն, որպէսզի ան կապ հաստատէ մեր եւ անոնց միջեւ:

Իր վերակազմութենէն անմիջապէս ետք, Տիկնանց Միութիւնը ճաշակալուր պատրաստութեամբ ու թախնդիր սպասարկութեամբ Հոգենաշի մը կը ձեռնարկէ որուն արդիւնքը նիւթ կը լլայ ընդհանուրին գնահատանքին եւ քաջալերիչ արտայայտութեանց, որպէս Ա. Զեռնարկ:

Ա. Զեռնարկն էր Դաշտագնացութիւնը մը դէպի Լոնկ-Սոլթ, ուր եւս մեր Միութիւնը Ծխական Խորհուրդին հետ միատեղ, ցոյց տուաւ բացառիկ ճըկունութիւն եւ ձեռնհասութիւն աշխատանքներուն մէջ:

Աշնան կազմակերպուեցաւ Ռամէճ-Սէյլ մը, որը յաջողութիւն մը եւս արձանագրեց մեր Համայնքէն ներս:

Եկեղեցւոյ օծման Հանդիսութեանց շաբթուան ընթացքին, Տիկնանցը լըծ-լած էր արդէն տենդագին աշխատանքի, յաջողցնելու Համար այդ առթիւ ըլլալիք Առաջին Զեռնարկը, որուն պիտի մասնակցէին Գաղութիս բոլոր նուիրեալ Տիկինները: Այս Զեռնարկն ալ, ինչպէս գիտէք, եղաւ բացառիկ ու շատ յաջող ձեռնարկ մը, բառին իսկական առումով: Որով Սոնթրէալի պատմութեան ոսկեզօծ էջերէն միոյն վրայ կը գրուէր 2 Դեկտեմբեր, 1970:

Այդ օրուան յաջողագոյն Մասն էր անշուշտ Հայկական Տոհմիկ Տարագուն ներու ցուցադրութիւնը, որը հանդիսացաւ եղակի ու լուրջ գնահատանքի բոլոր հանդիսականներու կողմէ անխտիր:

Զորորդ եւ վերջին գլխաւոր ձեռնարկն էր Ս. Ծննդեան ծագը, որը գըտաւ բաւականաչափ լաւ ընդունելութիւն մը մեր ժողովուրդին կողմէ, որով անթերի սպասարկութիւն տեղի ունեցաւ ինչպէս նաեւ ճոխ ծաշացուցակ մը պատրաստ եղաւ ներկաներուն Համար:

Ու ահա, Տիկնանցը այսօր իր շըջանը բոլորած ըլլալով կը ներկայանայ-

ԶԵՐ ԲՈՂՈՐԾԻՆ ԱռջԵԼ:

Եւ կը սիրէ յ՛ՌԱՍՎԱԼ թէ ինք լաւագոյնս կատարած է իրեն յանձնուած պարտականութիւնը. չետեւաբար խղճի բաւարարութեամբ կը յանձնէ զայն իր յաջորդներուն, մաղթելով այն ուժը եւ յաջողութիւնը զորս պէտք է ունենայ սոյն Աստուածահաճոյ պաշտօններուն համար եւ զորս պիտի ստանցնէ մօտ ատենէն:

Այս առթիւ Տիկնանց Միութեան անդամները անգամ մր եւս պարտք կը զգան շնորհակալութիւն յայտնել Պատուարժան Ծխական նորհութիւն, Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարի, որ կարելին ըրաւ իբրեւ խորհրդատու Օգտակարութիւն բերել, ամէն անգամ որ կարիքը ի յայտ ելաւ:

Ենորհակալութիւն Բուրաստան ամսօրեայ թերթին, մասնաւորաբար Պըն. Արամ Կուտսուցեանի, որ շատ անգամ մօտէն հետաքրքրուեցար, յիշեցուց Ամսաթերթին սիւնակներուն տրամադրութիւնը Տիկնանցի գործունէութեանց առընթեր, որոնք մերթ ընդ մերթ ու ակամայ մոռացութեան կենդարկուէին առօրեային հոգերուն մեր իւրաքանչիւրին քով բազմատեսակ ըլլալուն հետեւանքով:

Ենորհակալութիւն յարգելի Ծխականներուն, որ բարոյապէս ու նիւթապէս, հաւաքական թէ անհատական, քաջալերեց ու մղիչ ուժը եղաւ ծկեղեցասէր Տիկնանց Միութեան:

Աղենադպրուհի,  
Ա. Աղնաւուր.

Մնամք յարգանօք,  
Ատենապետուհի  
Ե. Գարիպեան.

• • • • • - 0 0 0 0 0 - - - 0 0 0 0 0 - - - -

ԲՈՒՐԱՍՏԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՀԱԿԱՆ ԿԱՋՄԱԿԵՐԱՊՈՒԹԻՒՆ  
: :

Բարոյական ՏԵՂԵԿԱՏՈՒՈՒԹԻՒՆ 1970 Տարեշրջանի.-

Յարգելի Ծխական Անդամներ:

Հաճոյքն ունինք Ծխական Տարեկան Ընդհանուր այս ժողովին ներկայացնելու ԲՈՒՐԱՍՏԱՆ ամսաթերթի բարոյական տեղեկատուութիւնը 1970 տարեշրջանի համար:

Ծանօթ է ԶԵԳԻ որ ԲՈՒՐԱՍՏԱՆ տարիէ մր ի վեր կը հրատարակուի նոր ըմբռնումով եւ տարագով ու ասիկա, հաղութեալի ներկայանալի եւ պարունակութեամբ ալ ճոխ եւ այլազան թերթով մր օժտելու մտահոգութենէն ու պահանջն մղուած:

Արդարեւ, երբ տարի մր առաջ ձեռնարկեցինք նոր ԲՈՒՐԱՍՏԱՆԻ հըրատարակութեանը, մշակեցինք ծրագիր մը ի մտի ունենալով գլխաւորաբար,

1. - Հրատարակել ամսաթերթ մը որ պարունակէ կրօնական, ազգային, մշակութային, կրթական, մարզական, գիտական եւ այլ նիւթերու շուրջ գրութիւններ:

2. - Ըլլալ Գաղութիս կեանքին հայելին ու խօսնակը եւ արտայայտել ու տարածել անոր գործունէութիւններն ու ծրագիրները:

3. - Սերտ յարաբերութիւններ եւ համագործակցութիւն ստեղծել Գաղութիս անդամներուն, Մարմիններուն եւ ղեկավարներուն միջեւ եւ զօրացնել միութանական կապերը:

4. - Միտքերը պատրաստել եւ լուսաբանել աւելի լաւ ըմբռնելու համար գաղութիս կենսական հարցերը:

5. — Ընթերցողները տեղեակ պահել Գանատահայութեան թէ բովանդակ շայ աշխարհի կեանքին մասին, ինչպէս նաեւ միջազգային գիտական, մըշակութային եւ ընկերային նուաճումներու։

6. — Ընթերցողներու ծանօթացնել Գանատահան եւ իր կեանքը Գաղութիս անդամներու դարձնել Հաւատարիմ, պարտաճանաչ եւ գիտակից Գանատացիներ, Հպարտ իրենց Հայկական ծագումով եւ Հայկական աւանդութիւններով։

Այս ըլլալով մեր սկզբնական ծրագրին գլխաւոր կէտերէն ոմանք, այսօր տարի մը ետք, մենք մեզի հարց կուտանք թէ արդէօք կրցանք որոշ չափով իրագործել մեր ծրագրը եւ օգտակար Հանդիսանալ գաղութիս եւ մեր Համեստ բաժինը բերել Հայ Եկեղեցին եւ Հայ Մշակոյթին։

Երբ աչքէ անցնենք ԲՈՒՐԱՍՏԱՆԻ 1970 տարեշրջանի թիւերը՝ թէեւ մեծ յաւակնութիւններ չունինք՝ բայց կը տարուինք խորհելու թէ կատարած ենք աշխատանք մը որ անտարակոյս պիտի արժանանայ ձեր որոշ գնահատանքին եւ օժանդակութեանը որպէսզի ԲՈՒՐԱՍՏԱՆ կարենայ շարունակել իր առաքելութիւնը գաղութիս ներս հետզհետէ ճոխացնելով եւ այլազանելով իր բովանդակութիւնը։

Թերթի մը կանոնաւոր եւ որոշեալ թուականին հրատարակութիւնը իր յաջողութեան երաշխիքներէն մին կը հանդիսանայ։ Ուրախ ենք ըսելու, թէ 1970 տարեշրջանի ընթացքին ԲՈՒՐԱՍՏԱՆԻ հրատարակութիւնը երբեք յապաղում չունեցաւ եւ թերթը լոյս տեսաւ ամէն ամիս եւ ճիշտ թուականին։

Այսօրուան առիթը պատեհ սեպելով, կը փութանք ստորեւ տեղ կարգ մը ծանօթութիւններ եւ ամփոփ կերպով թուել գլխաւոր նիւթերը որոնց մասին անդրադանք։

1. — Խմբագրական կազմ։ Տնօրէն Պրն. Արամ Կուտսուզեան։ Խմբագիրներ Պրնք. Նուրհան Ուզունեան եւ Գրիգոր Գյուլեան։ Աշխատակիցներ Պրն։ Խորէն Տէտէեան, Տիկ Արաքս Արթինեան, Օրդ Սոսի Շամլեան, Պրն. Վահէ Քէթլի, Պրն. Կարօ Շամլեան, Տիկ Արաքսի Ազնաւուր, Պրն. Սերովը գույլումնեան եւ Պրն. Պերճ էսէն։ Հարկ կը տեսնենք աշխատանքներուն մէջ, ինչպէս գեղագարդում, տպագրութիւն, առաքում, բաժանորդագրութեանց գանձում եւ այլն։ Հուստ կուզենք մասնաւորապէս շեշտել թէ Բուրաստան իր յաջողութիւնը կը պարտի այս խումբին համագործակից ու յարատեւ աշխատութեանը։ Այսպէսով օրինակ մը տուած կը լանք թէ կարելի է հաւաքական ոգիով աշխատի ազգային ու մտաւորական գետնի վրայ։

2. — Տպագանակ. — Բուրաստանի ամսական տպագանակն է 1000 օրինակ։ Կը դըկուի իր բաժանորդներուն, Ամերիկայի բոլոր Ծուխերուն, Սփիւրքի թէ Հայրենիքի ազգային հաստատութիւններուն եւ կարգ մը թերթերուն Ուրախ ենք հոս շեշտելու թէ բաժանորդագրութիւնները հետզհետէ կաւելնան եւ բաժանորդագիներու գանձումները աւելի բարելաւուած են։

3. — Եկեղեցական նիւթեր. — Գաղութիս գլխաւոր մտահոգութիւնն էր սեփական եկեղեցի մը ունենալը եւ 1970 տարին հանդիսացաւ այդ ուղղութեամբ ցարդ կատարուած աշխատանքներու եւ թափուած ճիգերու յաջողութեամբ պսակումը։ Բուրաստան իր էջերը լայնօրէն տրամադրեց եկեղեցաշինութեան, հանգանակութեանց, Մայր Տաճարի գնման ձեւակերպութեանց եւ Անոր Օծման արարողութեանց։ Այս առթիւ Բուրաստանի խումբը զօրացած հետեւալ ազգայիններէ, ՊՊ. Քերովք Պտուկեան, Եղիա Պեքմեզնեան, Տիգրան Պալեան, Կայծակ Օղիկեան, Ցակոր Կուտսուզեան, նուրհան ձանգուլ, Ալեքսանսական եւ Օրդ. Մ. Սպառեան, պատրաստեց օծման գեղատիպ Յուշամատեանը որ գնահատուեցաւ բոլորին կողմէ անխտի եւ ամերիկահայութեան կարգ մը կազմակերպութիւններ եւ անհատներ ալ իրենց գնահատանքը յայտնեցին շնորհաւորական նամակներով ու նուէրներով։ Եկեղեցական կարեւոր եղել լութեանց առթիւ տուինք լուրեր եւ գրութիւններ։ Անոնցմէ կարելի է յիշել Եպիսկոպոսաց ծողովը եւ Ս. Միւռոնի օրհնութիւնը Ս. Էջմիածնի մէջ։ Վեհափառ Հայրապետի ծննդեան ճօրդ ամեակի եւ Գահակալութեան 14րդ տարեդարձի հանդիսութիւնները վեհափառ Հայ- րապետի եւ Նորին Սրբութիւն Պօղոս Զ. Պապի պատմական հանդիպումը ի Վատիկան եւ Վեհափառ Հայրապետի այցելութիւնը Ս. Ղազարի Մխիթարեան Հայ- Շար. յաջորդ էջ-

ըերուն։ Այս առթիւ կարժէ նաեւ յիշել թէ, Բուրաստան եղաւ առաջին հայ թերթը որ տուաւ ամբողջական թարգմանութիւնը վազգէն Ա. Պօղոս Զ. Միացեալ չաղորդագրութեան, հրատարակուած Վատիկանի Օսսերվաթորէ Ռոմանո Օրաթերթին Մէջ։ Սփիւրքի հայ թերթերէն ոմանք արտատպեցին այս չաղորդագրութիւնը զայն առնելով Մեզմէ։ Եկեղեցական այս նիւթենու շարքին կարելի է աւելցնել նաեւ վեհափառ Հայրապետի քարոզները 1970ի ընթացքին։ Առաջնորդ Գերշ. Տ. Թորգոմ Արք. Մանուկեանի եւ Գանատաշին Առաջնորդական Փոխանորդ Գերշ. Տ. Վաչէն Եպս. Յովսէփեանի ուղերձները, մեր չոգեւոր չովիւ Արք. Տ. Կիւրեղ Քանյ. Եթէնէկեանի հովիւի խօսքերը, էջեր Հայց. Եկեղեցւոյ պատմութենէն, եւ այլն։

4.- Յոթերթեաններ։ 1970 տարին յատկանշուեցաւ հայ արժէքներէն ու մանց ծննդեան կամ մահուան յոբելինական հանդիսութիւններով, հոս կամ այլուր։ Բուրաստան ոչ միայն անդրադարձան գաղութէս ներս կազմակերպւած այդ հանդիսութիւններուն, այլ իր ընթերցողներուն ներկայացուցայդ արժէքները, անոնց կեանքն ու գործը։ Վերյիշումը օգտակար կը նըկատենք Կոմիտաս Վարդապետ, Յովհ. Թումանեան, Լեւոն Շանթ, Երուանդ Օտեան, Խրիմեան Հայրիկ, Վահան Թէքէեան, Հրաչեայ Յովհաննիսեան եւ բոլորիս ծանօթ Ապրիլթան Եղեռնի 55րդ ամեակի ոգեկոչումը։

5.- Մեր Արժէքները։ Մանօթ է Ձեզի թէ գաղութիս անդամներէն ոմանք կը պաշտօնավարեն տեղւոյս համալսարաններու Մէջ, իր մաս նագէտներ եւ շնորհիւ իրենց ղասախօսութեանց եւ գիտական աշխատանքներուն, արժանացած են միջազգային գնահատանքի։ Մեր ձանչնանք մեր Արժէքները սիւնակով ջանացինք զանոնք ներկայացնել հայ աշխատահին։ Անոնք եղան Տօքթ. Արթօն Տէմիրճեան, Տօքթ. Արշակիր Կէնճեան, Տօքթ. Ստեփան Հաննէսեան եւ Տօքթ. Ցակոր Խաչիկեան։ Մեր գրութիւնները վերոյիշեալ ներու մասին արտապուեցան Սփիւրքի զանազան թերթերու Մէջ։ Անշուշտ թէ տակաւին ունի հանատահայ ուրիշ Արժէքներ որոնց մասին անդրադառնալու առիթները պիտի ունենանք։ Հայ արժէքներու մասին խօսելով անդրադարձած ենք նաեւ արուեստագէտ-գրագէտ Ողբ. Բիւզանդ Թոփալեանի, Վահէ Կոտէլի, Ռուբէն Մամուլեանի եւ ուրիշներու մասին ալ։

6.- Միութենական կեանք։ Գաղութէս ներս կը գործեն զանազան կազմակերպութիւններ, Միութիւններ եւ Ցանձնախումբեր, որոնցմէ ոմանք ենթակայ են Մոնթրէալի Հայց. Առաքելական Եկեղեցւոյ եւ կը վայելեն անոր հովանաւորութիւններ։ Այս կազմակերպութիւնները, միութիւններն ու յանձնանիումբերը, բոլորն ալ համախմբուած Եկեղեցւոյ շուրջ, գաղութէս ներս կը կատարեն ծգտակար եւ գնահատելի աշխատանքներ թէ Եկեղեցասիրական, թէ բարեսիրական, թէ մշակութային, թէ երիտասարդական, թէ մարզական եւ թէ ալ սկառւտական։ Բուրաստան մասնիշը բոլորին ալ ծեռնարկներուն եւ գործունէութիւններուն լուրերը տուաւ։ Մեր սիւնակներուն Մէջ, մենք միայն չգոհացանք անդրադառնալով Մամիկոնեան Մշակութային Ցանձնախումբի, Հեծեկսի, Տիկնանց օժանդակի, Եկեղեցասէր Տիկնանց Միութեան, Թէքէտէսն Մշակութային Միութեան եւ Պոլսահայ Միութեան, Եկեղեցաշինութեան Ցանձնախումբի կամ Ծխական Խորհուրդի ու Հայ Դպրոցի գործունէութիւններուն, այլ նաեւ Հ. Բ. Ը. Միութեան, Հ. Ս. Ը. Միութեան գործունէութիւններուն եւս։ Առաքել, Բուրաստան մասնաւոր թիւ յատկացուց Հայկ. Բ. Ը. Միութեան արժանաւոր Նախագահ Տիար Ալեք Մանուկեանի Մոնթրէալ պյայցի լութեան, Ամենօրեայ Մանկապարտէզի բացման արարողութեանց եւ Հ. Ս. Ը. Միութեան մարզական շաբաթավերջին։

7.- Զանազան Սիւնակներ։ Մեր կանոնաւոր ընթերցողները ծանօթ են անշուշտ մեր սիւնակներուն որոնք կը պարունակեն զանազան նիւթեր, գըրական, գիտական, կրթական, մշակութային, երգիծականուութագական։ Հոս կը փափաքինք շեշտը դնել մեր մասնայտուկ սիւնակներէն ոմանց վըրայ, Խօսքը Ձերն է, ձանչնանք Գանատահան, Հայ մանուկ սորվէ Հայերէն, Զանանք մեր Բառապաշարը աւելցնել եւ Համայնքային նուրեան, որոնք իրենք գիրենք կը բացատրեն իրենց հետապնդած նպատակներով եւ սկսած ենք նաեւ Քէպէք նահանգի յատուկ կարեւոր լուրերու պատկերագր սիւնակը։

8.- Գնահատանք : Թերթի մը կեանքին մէջ մէկ տարին շատ կարճ ժամանակ է, բայց ուրախ ենք յայտնելու թէ Գանատայի եւ թէ Սփիւռքի մեր ազգակի ցներէն եւ կազմակերպութիւններէն ստացած ենք գնահատական եւ շնորշնորհաւորական արտայայտութիւններ եւ նուէրներ ալ : Շնորհակալ ենք բղլութին : Երբեք յաւակնութիւնը չունինք թէ կատարեալ եւ անթերի գործ մը կատարած ենք : Գիտենք թէ թերութիւններ ունինք : Պիտի ջանանք զանոնք սրբագրել եւ ժամանակի ընթացքին Բուրաստանը դարձնել Գաղութիս պատի բերող, փնտուած ու սիրուած հրատարակութիւնը :

Բուրաստան Հրատարակչական Կազմակերպութիւն  
Տնօրէն,

Արամ Կուտսուզեան

Մոնթրէալ, 8-2-1971.

:::::::::::::::::::0000000000000000::: ::::: :::::

ԿՈՄԻՏԱՍ ԴՊՐԱՑ ԴԱՍԻ  
Բարոյական տեղեկատուութիւն  
::: :::::

Մոնթրէալի Հայոց Առաքելական Ս. Եկեղեցւոյ Կոմիտաս Դպրաց Դասը բացառիկ վայլուն շրջան մը եւս բոլորած է այս տարի :

Գլխաւորութեամբ անձնուէր Վարիչ ու Դպրապետուէի Տիկ Մարգրիտ Զավագամաթեանի անգին ջանքերուն եւ Դասուս ժրաշխան Անդամանդամուէի ներուն վափառ ու կամքին, կանոնաւոր կերպով կատարուած կրօնական երգերուն եւ շարականներու փորձերուն արդիւնքը գնահատութեան արժանացած է Կիրակի եւ Տօնական օրերուն Մայր Տաճար այցելող հաւատացեալ Հայ Ժողովուրդին կողմէ :

Մասնաւորաբար մեր Եկեղեցւոյ օծման հանդիսութիւններուն օրէն ամիսներ առաջ, այս կարեւոր Զեռնարկին պէտք եղած շարականները սորվելու համար, խիստ աշխատութիւն եւ փորձեր կատարուեցան, գլխաւորութեամբ Գերշ. Սրբազն Հօր եւ մեր Դպրապետուէի նույնական օրերուն Մայր Տաճար այցելող հաւատացեալ Հայ Ժողովուրդին կողմէ :

Այս առիթը՝ օգտագործելով, անգամ մը եւս Դպրաց Դասուս Վարչութիւնն ու անդամները պարտք կը համարենք մեր խորին շնորհակալութիւնը յայտնել մեր սիրելի Սրբազն Հօր, Հոգեւոր Հովիւին եւ ժրաշխան Վարիչին, որոնք ոչինչ խնայեցին մեր աշխատանքներուն յաջողութեամբ պսակուելուն առնչութեամբ :

Հոս պարտք կը զգանք նաեւ մեր գործի սահմաններէն ներս ըլլալուն համար յատկապէս յիշել Գաղութիս բարերարներէն Տէր եւ Տիկ Յակոբ Մանուկեանները, որոնք Դասուս նուիրած են 16 նոր շապիկներ, որոնց պակասը զգալի էր, ինչպէս նաեւ շնորհակալութիւն կը յայտնենք մեր անդամուէին Տիկ Մելիքեանի, որ ապահոված էր 20 շապիկներու մաքրութիւնը :

Զուգելով աւելորդաբանութեամբ Երկարել մեր տեղեկագիրը, այլ գործնականով վաստել ջանալով մեր Երգչախումբին գոյութեան արժէքը ի շահ մեր սիրելի Համայնքին, մնամք բոլորիդ, յարգելի Ծխականներ, արեւշտութեան եւ յաջողութեան լաւագոյն ու անկեղծ մաղթանքներով :

Ի դիմաց ԿՈՄԻՏԱՍ  
Դպրաց Դասուս Վարչութեան,  
Ատենապետ, Գ. Փէլթէքեան

::::::: ::::: ::::: ::::: ::::: ::::: ::::: ::::: ::::: :::::

Տարեկան Տեղեկագիր ՀԵԵԿԱ-ՄՈՆԹՐԷՎԱԼԻ Մասնաճիւղին .-

Հայաստանեայց Եկեղեցւոյ Երիտասարդաց Կազմակերպութեան Մոնթրէվալի Մասնաճիւղը այս առթիւ կուզէ իր Երախտագիտական եւ շնորհակալութեան խորին գգացումները յայտնել Գաղութին Առաջնորդական փոխանորդ, Գերշ. Տէր Վաչէ Եպսկ Յովսէփեանի, Հոգեւոր Հովիւ Արժանաշնորհ Տէր Կիւրեղ Քհնյ, Եթէնէկեանի եւ Պատուարժան Ծխական նորհուրդին իրենց տարած Հոգանատանչ եւ պատասխանատու աշխատանքին համար: Մեր անկեղծ շնորհակալութիւնը կուզենք յայտնել նաեւ Բոլոր այն Ազգայիններուն որոնք իւրենց բարոյական եւ նիւթական քաջալերանքով նպաստեցին այս շարժումին:

Մենք կը հաւատանք թէ Եկեղեցին պէտք է Կեդրոնը հանդիսանայ Սփիւրքահայ գաղութներու: Եկեղեցին ըլլալով Աղօթատեղի, մասնաւորապեար Հայ Ժողովուրդին համար համախմբուելու, մեր ազգային գգացումները ամրապնդելու վայրմրնէ: Մեր գեղեցիկ ու ընդարձակ Եկեղեցին եւ իր յարակից շէնքերը բոլոր դիւրութիւնները կը նծայեն այս գաղութին իրականացնելու մեր վերի տեսակէտր:

Երազները իրականութիւն են հիմայ, ամէն անհատ պարտի իր աշխատանքի բաժինը բերելու, ալ աւելի ճոխցնելու համար արտաքինով գեղեցիկ շէնքին ներգնամասն ալ: Երուզեռ մը պէտք է ստեղծուի որպէսզի արդարանայ տարիներու նիւթական եւ բարոյական մեր գոհութիւնները:

Մենք, Եկեղեցւոյ Երիտասարդութիւնս, պատրաստ ենք ասիկա լաւագոյնս գործադրելու եւ ցոյց տալու քիչ մը թերահաւատ կարգ մը մեր մեծերուն, թէ իրենց յաջորդները կրնան զիրենք գերազանցել ալ:

Ցիշողութիւնները թարմացնելու համար այստեղ կարճ կերպով մը նշենք մեր անցեալ շրջանի գործունէութիւններէն մի քանին:

Մշակութային ու բանախօսական Երեկոներ, ինչպէս նրիմեան Հայրիկի 150 ամեակին նուիրուած հանդիսութիւնը, որ կազմակերպուած էր Մամիկոննեան Յանձնախումբին հետ միասնաբար:

Պրն. Նոււրհան-Ռուզունեանի ելոյթը իր Հայաստան այցելութեան առթիւ: Իսկ Հայ Գիրը տարածելու եւ մեր տարեկիցներուն մէջ հետաքրքրութիւնարթնցելու նպատակաւ մեր հրատարակած Թաղթանակը իր բովանդակութեամբ արգդէն իսկ բաւականաչափ գաղափար մը կուտայ նպատակին մեծութեան եւ տարւած աշխատանքին ընդարձակութեան մասին:

Կրօնական եւ բարոյախօսական Երեկոներ, որոնք մասնաւոր տեղ ունին մեր Առաքելական Շաբթուան ծրագրին մէջ:

Անկասկած առողջ պատկեր մը կը ներկայացնէ ՀԵԵԿԱՓի Երիտասարդութեան մասնակցութիւնը Կոմիտաս Դպրաց Դասին, Մամիկոննեան Մշակութային Յանձնախումբին եւ Շաբթօրեայ Հայ Դպրոցին:

Մեր մասնակցութիւն բերինք նաեւ Գաղութային եւ միջ-Միութենական շարժումներուն, ինչպէս Մարզական խաղերուն եւ Եկեղեցւոյ օծման Հանդիսութիւններուն, մասնաւոր կերպով կուզենք յիշել Ապրիլեան Սգատօնին մեր վերցուցած բաժինը:

Կազմակերպութիւնը կը անցեալ տարուան Զեր Երջանիկ պահերը, զորս առիթը ունեցանք վայելելու մեր Դիմակաւոր Պարահանդէսին, պարանցիկ Երեկոներու, Ընկերային հաւաքոյթներու, շարժապատկերի ներկայացումներու եւ ամառնային դաշտագնացութիւններու ընթացքին:

Եկեղեցիին բարոյական քաջալերանք մը ըլլալէ զատ Կազմակերպութիւնս իր Զեռնարկներուն հասոյթն ալ, ինչպէս միշտ, տրամադրեց ամբողջութեամբ Մայր Գանձին, որուն գումարն էր մօտ 1000 տոլար:

Հիմայ որ Եկեղեցին Մեր Սեպհականութիւնը դարձած է, տեղին է յիշել  
մեր նիւթական աջակցութիւնը միայն ու միայն Եկեղեցաշինութեան ֆոնտին  
որ հաստատուած էր 1965ին, եղած է թօօ տոլար։ Այս գումարը ըլլավով  
հանդերձ չնշին, կապացուցանէ մեր հաստատակամութիւնը եւ Եկեղեցւոյ Ե-  
րիտասարդութեան կամքին կորովը։

Կոյ յուսանք թէ ներկայ խանդավառութեամբ 1971ին աւելի լաւ գործու-  
նէ ութիւն մը պիտի կարենանք մշակել ի շահ մեր Սուրբ Եկեղեցւոյ պայ-  
ծառութեան եւ ի պատիւ մեր ստեղծագործ Հայ ժողովուրդին։

Յարգանօք,  
ՀԵԵԿԱԻ ՄՈՆԹՐԷԱԼԻ ՄԱՍՆԱՅ.  
ԱՄԵՆԱՊԻՐ, ԱՄԵՆԱՊԵՏ,  
ՏԻԳՐԱՆ ՊԱԼԵԱՆ ՀԱՅԿ ՄԻՍԱՔԵԱՆ

Ծխականի Ելեմուտք  
::: 1970 Տարւոյ

	Մուտք	Ելք
Դրամատան մէջ։	544.92	
Եկեղեցի,	7288.58	6772.45
Շէնք,	2858.38	7096.46
Բուբաստան,	1176.00	4489.77
Դպրոց,	5085.88	5861.81
Ծխական,	8826.50	2822.48
Զեռնարկներ,	4026.82	900.87
Անդամատուրք,	1080.00	
Նուիրատուութիւնք,	8482.01	
Դրամատան Մայք,	19.60	49.72
Փոխատուութեան Տոկոս,		750.00
Առաջն. Տուրք,		188.50
Կանխիկ ի Դրամատուն,		402.58
	28888.54	28888.54
	~~~~~	~~~~~

~~~~~  
~~~~~  
~~~~~

Եկեղեցւոյ Շինութեան Յանձնախումբի 1970ի

Նիւթական Տեղեկագիրը.

\*\*\*\*\*

Ի Ճեռին ----- Մուտք ----- Ելք -----  
Եւ Դրամատան Մէջ : 31,690.89 Եկեղեցւոյ գնման :

Նուի Րատուութիւնք :

Անհատական,  
Միացեալ նահանգներէ,  
Յանձնախումբերէ,  
Պարահանդէս,  
Օծման Մատեանէ,  
Հ.Բ.Ը Միութենէ,  
Վարձքներէ :  
-Գումար-

108,878.24

Ամերիկեան տռլարէ  
Եւ Տոկոսներէ : 1,529.88

Ա. Վճարում եւ  
Տոկոս : 111,125.00

Կարեւոր Փո-  
փոխութիւններ :

Աւագ Սեղան,  
Գորգեր, Ատաղց,  
Ելեկտրականութիւն,  
Ներկ :  
Օծման ծախսեր,  
Օծման մատեանին :  
-Գումար-

20,094.14

ԳՈՒՄԱՐ . - 187,097.96  
ՀԱՀՀԱՀՀԱՀՀԱՀՀԱՀ

Քաղաքապետական  
Տուրք եւ  
Հանրի Պուրասսայի  
Հողին Համար : 972.66

Գումար . - 182,191.80

Դրամատան Մէջ  
պատրաստ գուլ-  
մար, 81.12.1970 :  
4,906.16

Ընդհ. ԳՈՒՄԱՐ : 187,097.96

ՀԱՀՀԱՀՀԱՀՀԱՀՀԱՀ

Գանձապետ, Կայծակ օղիկեան . -

\*\*\*\*\*  
\*\*\*\*\*

\*\*\*\*\*

::: Եկեղեցասէր Տիկնանց Մինչւթեան տարեկան չաշուէկշիռը :::  
Յունուար՝ Դեկտեմբեր, 1970.

-----

----- Ա Ռ Ի Տ Ք ----- Գումար ----- Ե Լ Ք ----- Գումար -----

|                            |         |                      |         |
|----------------------------|---------|----------------------|---------|
| Փոխանձուած նախորդ տարի էն: | 770.71  | Զանազան Ծախսեր:      | 279.96  |
| Զանազան հասոյթներէ:        | 1927.98 | Ճաշերու ծախս:        | 148.14  |
| Հասոյթներէ:                | 861.15  | Ծիսականին յանձնուած: | 585.00  |
| Տոկոս:                     | 78.99   | Եկութեան թանձն:      | 1500.00 |

|                 |         |                 |         |
|-----------------|---------|-----------------|---------|
| Ընդհ. Գումար. - | 8188.88 | Գումար. -       | 2457.50 |
|                 |         | Պատրաստ գումար: | 681.88  |
| Ընդհ. Գումար. - | 8188.88 |                 |         |

Յունուար, 14, 1971.

Գանձապահ, Ս. Պելկին.

oooooooooooooooooooooooooooo

::::: Կոմիտաս Դպրաց Դասինի Եկական տեղէկագիրը 1970 Նրջանի ::::  
----

----- Ա Ռ Ի Տ Ք ----- Գումար ----- Ե Լ Ք ----- Գումար -----

|                            |        |                   |        |
|----------------------------|--------|-------------------|--------|
| Փոխանձուած նախորդ տարի էն: | 718.46 | Զանազան Ծախս:     | 2.80   |
| Կանխիկ փոխանձում:          | 25.00  | Եկեղեցւոյնուէր:   | 500.00 |
| Տոկոս:                     | 8.95   | Ծաղկեփունչ:       | 12.00  |
| Դարձեալ տոկոս:             | 12.72  | Շապկի մաքրութիւն: | 1.50   |
| Պնակի հասոյթ:              | 118.65 | -----             |        |
| Հարսանիքի առթիւ նուէր:     | 20.00  | Գումար. -         | 516.80 |
| Ընդհ. Գումար. -            | 908.78 | Պատրաստ գումար:   | 887.48 |
| Ընդհ. Գումար:              | 908.78 | -----             |        |

Յունուար, 28.1971:

Գանձապահ, Ստորագրութիւն:

oooooooooooooooooooo

::::: Հենկակ Վեցամսեայ նի Եկական տեղէկագիրը 1970 Նրջանի ::::  
-----

----- Ա Ռ Ի Տ Ք ----- Գումար ----- Ե Լ Ք ----- Գումար -----

|                          |        |                 |        |
|--------------------------|--------|-----------------|--------|
| Փոխանձուած նախորդ ըրջան: | 107.57 | Զեռնարկի Ծախս:  | 48.63  |
| Անդամավճարներէն:         | 55.00  | Դրամատան:       | 8.00   |
| Ֆիլմի Ձեռնարկ:           | 88.61  | Դրոշմաթուղթ. -  | 20.00  |
| Կրտսերաց չաշիւ:          | 4.64   | -----           |        |
| Ընդհ. Գումար. -          | 255.82 | Գումար. -       | 71.68  |
|                          |        | Պատրաստ գումար: | 184.14 |
| Ընդհ. Գումար:            | 255.82 | -----           |        |

Փետր. 1, 1971.

Գանձապահ, Վերժին Միսաքեան

oooooooooooooooooooo

Ն Ա Խ Ա Հ Ա Շ Ի Ի

oooooooooooooooooooo

1971 Տարեցը ջանի Գործունէութեան  
::::::::::: :::::::::::::::::::::

| ՆԻՒԹԵՐ               | ՄՈՒՏՔ       | ԵԼՔ         |
|----------------------|-------------|-------------|
| :::::::::::          | ::::::::::: | ::::::::::: |
| Կանխիկ ի Դրամատուն:  | 400.00      |             |
| Եկեղեցի,             | 8000.00     | 6500.00     |
| Շէնք,                | 8400.00     | 16000.00    |
| Բուրաստան,           | 2000.00     | 4600.00     |
| Դպրոց,               | 5000.00     | 5700.00     |
| Ծխական,              | 4500.00     | 7000.00     |
| Զեռնարկներ,          | 8000.00     |             |
| Անդամատութք,         | 2000.00     |             |
| Նուիրատուութիւնք,    | 8000.00     |             |
| Դրամատան Ծախք,       |             | 50.00       |
| Փոխատուութեան Տոկոս, |             | 750.00      |
| Առաջն.Տուրք,         |             | 1500.00     |
| 1970ի Պարտքեր,       |             | 5600.00     |
| օժանդակ Մարմիններէ,  | 6400.00     |             |
|                      | -----       | -----       |
|                      | 47700.00    | 47700.00    |
|                      | -----       | -----       |

oooooooooooooooooooooooooooo

oooooooooooooooooooooooooooo

oooooooooooooooooooo